

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

11 սեպտեմբեր 1978 թվականի պաշտոնական գրությամբ, ուղղված Վեհափառ Հայրապետին, վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը ներկայացրել էր մի զեկուցագիր Թբիլիսիի հայոց ս. Գևորգ Մայր եկեղեցում նույն տարվա ընթացքում կատարված վերանորոգչական աշխատանքների մասին:

1978 թվականի փետրվար 21-ի գրությամբ առաջնորդ սրբազանը մանրամասնորեն Վեհափառ Հայրապետին էր ներկայացրել 1977 թվականին վրահայոց բոլոր եկեղեցիներում կատարված շինարարական աշխատանքները և ս. Գևորգ եկեղեցու տարվող հիմնական վերանորոգությունները (Տես «Էջմիածին» ամսագիր, 1978 թ., № Գ, էջ 62—63):

Ներկա զեկուցագրից պարզվում է, որ արդյունավետությամբ շարունակվել է ս. Գևորգ եկեղեցու վերանորոգությունը: Հիմնովին վերանորոգված և բարեկարգված են եկեղեցու հիմքերը, որոնք այլևս ամբողջությամբ պաշտպանված են խոնավության դեմ: «Եկեղեցի ներծծվող խոնավությունը լրիվ կասեցված է»: Վերանորոգվել է ամբողջությամբ եկեղեցու տանիքը նոր թիթեղներով:

Ներքին վերանորոգությունների ընթացքում հատնաբերված են չորս մեծադիր և երկու փոքր ծավալի որմնանկարներ: Մեծադիր որմնանկարները հետևյալներն են.

ա) Հարավային սյան վերևում՝ ս. Գաբրիել հրեշտակապետը՝ «Ավետման ծաղիկը ձեռքին, Հորդանան գետի տեսարանով»:

բ) Հյուսիսային սյան վերևում՝ ս. Միքայել հրեշտակապետը՝ «զինված սրով և վահանով»:

գ) Արևմտյան պատի հարավային մասում՝ «Ադամի և Եվայի դրախտային կյանքի տեսարանը, մեղանչումից առաջ»:

Ս. Միքայել հրեշտակապետ

դ) Արևմտյան պատի հյուսիսային մասում՝ «Ադամի և Եվայի դրախտից արտաքսման պատկերը՝ մեղանչումից հետո»:

Իսկ փոքր ծավալի որմնանկարներն են.

ա) Հարավային սյան վրա՝ ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» գիրքը բաց վիճակում:

բ) Հյուսիսային սյան վրա՝ ս. Էջմիածնի Մայր տաճարը և Արարատ լեռը:

Բոլոր որմնանկարները մաքրված են և վերանորոգված: Այսպիսով, ս. Գևորգ եկեղեցու նորահայտ որմնանկարների թիվը բարձրացավ 16-ի:

Վեհափառ Հայրապետին մատուցելով վրահայոց թեմի ժողովրդի որդիական ազնիվ զգացումներն ու հարգանքները, տ. Գևորգ եպս. Սերայդարյանը վերջացնում է իր զեկուցագիրը՝ նշելով, որ թեմը մշակում է «եկեղեցուն հարակից շինությունների վերանորոգության նոր ծրագրեր ևս», որոնք հանձնվելու են Նորին Սուրբ Օծության «բարձր նկատառմանը»:

Սաղմոսերգու Դավթի հաղածվելը Սավուղ թագավորից



Նարեկ